

Գեորգ Սարկաւագ Ղուշեան, *Քրիստոնէական Աշխարհընկալումը Հայոց Գրական Անդաստաններում*, Երեւանի Համալսարանի Հրատարակչութիւն, 2005, 56 էջ:

ԱՆԱՀԻՏ ՎԱՐԴԱՆԵԱՆ
tilian@mail.ru

Հայ ժողովրդի ճակատագրում վճռորոշ դեր կատարած հայ գրերի գիտի շնորհիւ հայերէնի վերածուած առաջին գրքի՝ *Աստուածաշունչի* հետ զարկ է տրուում թարգմանական գրականութեանը, որի արդիւնքում լոյս աշխարհ են գալիս յունարէնից եւ ասորերէնից թարգմանուած աստուածաբանական, դասանաբանական, մեկնողական, ծիսական, վարքագրական, քերականական եւ այլ բնոյթի բազմաթիւ աշխատութիւններ, որոնցից շատերի բնագրերն այժմ չկան:

Թարգմանական գրականութեան հիմքի վրայ ստեղծուեց նաեւ հայ գիտական եւ գեղարուեստական գրականութիւնը, որ տոգորուած էր աստուածաշնչեան աշխարհագրագոյութեամբ եւ լեզուամտածողութեամբ: Ուստի, ձեւաւորուելով քրիստոնէական մշակոյթի քուրայում, հայ գեղարուեստական գրականութիւնը արտացոլել է վերջինիս հիմնական սկզբունքներն ու էութիւնը, որը յարիւր էր հայ քրիստոնեայի ինքնագիտակցութեանն ու աշխարհայեացքին:

Խորհրդային գրականագիտութեան մէջ, սակայն, հայ դասական գրականութեան երկերը որոշակի ճշգրիտ գիտական մեկնաբանութիւններին գուգահեռ, արժեւորուել են այլ մեկնակէտից: Ենթարկուելով գաղափարական որոշակի ուղղուածութեան, ողջ հայ գրականութեան, նաեւ ժողովրդական բանահիւստութեան մէջ քրիստոնէական տարրերն ու աշխարհայեացքը դիտուել են առաւելապէս իբրեւ աշխարհիկ երեւոյթներ: Սա, իհարկէ, բխում էր ժամանակի ոգուց, մինչդեռ, օրինակ, Գրիգոր Նարեկացին, Ներսէս Շնորհալին, Ֆրիկը, Նահապետ Բուշակը, Սայեաթ-Նովան եւ այլք ապրել եւ ստեղծագործել են միջնադարում, մի ժամանակաշրջան, երբ հայ մարդու հոգեբանութիւնը, մշակոյթը, լեզուամտածողութիւնը շաղախուած էին քրիստոնէական վարդապետութեամբ: Նրանցից շատերն իրենց ուսումն ստացել են ժամանակի յայտնի վանքերում, եղել են հոգեւորականներ (Նարեկացին դասուել է սրբերի կարգը, Սայեաթ-Նովայի վարքն ընդգրկուած է «Հայոց Նոր Վկաներ»-ի շարքում): Եւ հնարատր չէ, որ իրենց ստեղծագործութիւններում, որոնք նրանց հոգու անմիջական ու անկեղծ պոռթկումներն են, նրանք լիովին «ծերբազատուած» լինէին քրիստոնէական աշխարհընկալումից եւ արծարծէին աշխարհի շեշտուած նիւթականացման գաղափարներ:

Պէտք է նշել, սակայն, որ արդի հայ գրականագիտութեան մէջ նկատուում է տրամագծօրէն հակառակ՝ աշխարհիկը անտեսելու եւ գրական փաստերը քրիստոնէական աշխարհայեցողութեամբ մեկնաբանելու երբեմն չափազանցուած միտում: Փոփոխուած սոցիալ-պատմական յարաբերութիւնների ար-

դիւնքում քրիստոնէական արժէքների անժխտելի ազդեցութիւնը կրող Ֆրիկի, Բուչակի, Յովհաննէս Սարկաւազի, Նաղաշ Յովնաքանի, Յովհաննէս Թլկուրանցու, Յովհաննէս Երզնկացու ու այլոց ստեղծագործութիւններում նկատելի են արդէն աշխարհականացման միտումներ:

Ամենեւին չնուազեցնելով նախորդների կատարած աշխատանքը՝ նկատենք, որ Ի. դարավերջին հայ գրականագիտութեան մէջ սկսում են յայտնուել իշխող գաղափարախօսութեանը «բախուող» նոր տեսակետներ, քանի որ հնարատր չէր հայ գրողներին հանել իրենց ժամանակաշրջանից եւ նրանց քնարերգութեանը, գեղագիտութեանը եւ ողջ էութեանը պարտադրել ժամանակակից մարդու մտածողութեան մոդէլը: Սա վերաբերում է մանաւանդ միջնադարի ստեղծագործողներին: Հարկ է նշել, որ յիշեալ ժամանակաշրջանում սկսում է ժողովրդական երգի եւ հեղինակային ստեղծագործութեան միահիստում, ներքափանցում, որի շնորհիւ նկատում է աշխարհիկ ոգու վերելք, սակայն այնուամենայնիւ, տիրապետողը աստուածապետական մտածելակերպն էր:

Ասուածք առաւել որոշակիացնելու համար հպանցիկ ուրուագծերով անդրադառնանք մասնաւորապէս Նարեկացու ստեղծագործութեան կապակցութեանը արտայայտուած կարծիքներին, որտեղ նկատելի է տեսակետների դրական տեղաշարժ եւ վերընթաց ուղղուածութիւն: Այսպէս, Հենրիկ Բախչինեանը¹, խօսելով Նարեկացու տաղերի մասին, որպէս բնորոշ եւ կարեւոր առանձնայատկութիւն շեշտում է այլաբանութեան կիրառումը, որը, ի դէպ, գալիս է դեռեւս Աստուածաշնչից, որտեղ հոգեւոր իրողութիւնները պատմուել են քօղարկուած ձեւով, այլաբանօրէն: Նա իրաւացիօրէն գրում է, որ Նարեկացու երգած սերը պէտք է հասկանալ փոխաբերական իմաստով, քանի որ, ըստ էութեան, այն սեր է՝ առ Աստուած:

Ըստ նարեկացիագետ Արշալոյս Ղազինեանի՝ եկեղեցական բանաստեղծութեան աւանդական ձեւը այլեւս սպառել էր իրեն եւ կորցրել իր ներգործութեան ուժը, ուստի Նարեկացին դիմում է ժողովրդական երգի յուզական քնարականութեանը, անմիջականութեանը, նաեւ արտայայտչամիջոցներին՝ ձգտելով խորհրդանիշների շնորհիւ երկրայինի, առարկայականի միջոցով բացայայտել վերերկրայինը, հոգեւորը: «Առարկայի երկակի իմաստը, - նկատում է գրականագետը, - թէեւ սքօղում է բովանդակութեան յատակութիւնը, հնարաւոր է դարձնում մեկնարանութեանը մօտենալ տարբեր հայեցակէտերից»², աւելացնելով, որ այդ երկակիութիւնը առաւել տպատրիչ է դարձնում քնարական պատկերը, շեշտում է լեզուական արտայայտչամիջոցների ճոխութիւնը:

Խօսելով Նարեկացու տաղերի թուացեալ աշխարհիկ լինելու մասին՝ Ղազինեանը իրաւացիօրէն գտնում է, որ բանաստեղծը բնութեան երեւոյթները եւ կնոջ գեղեցկութիւնը պատկերում է այլաբանօրէն՝ «որպէս աստուածային յաւիտենական եւ անփոփոխ գեղեցկութեան յարափոփոխ արտայայտութիւն՝ տեսանելի, զգալի, շօշափելի եւ իմանալի նիւթական ձեւերի մէջ»³: Նարեկացին ստեղծագործական լիցքեր է ստանում հոգեւոր ակունքից, նրա հա-

մար բարոյական մաքրագործ կատարելատիպը Աստուածն է, որին յաւերժ ձգտում է մեղսալի մարդը: «Աստուած իդէալ է,- գրում է Ղազինեանը,- եւ այն ամէնը, ինչ վեհ է ու գեղեցիկ, ինչ բարի է ու ճշմարիտ, Նարեկացին մարմնաւորում է Աստծոյ մէջ»⁴:

Այս առիթով նշենք, որ մէկ ուրիշ նարեկացիագետի՝ Պօղոս Խաչատրեանի վկայութեամբ՝ ինքն աշխատում էր «Սուրբ Գիրքը Նարեկացու Բանաստեղծական Համակարգում» ուսումնասիրութեան վրայ, որի հրատարակումը, ցատօք, անկատար մնաց հեղինակի անժամանակ մահուան պատճառով:

Նարեկացու աղօթագիրքը ձեւաւորուել է հայ ժողովրդի քաղաքակրթութիւնից եւ գաղափարաբանութիւնից եւ «յեւուում է դաւանարանական գրականութեան եւ առաջին հերթին՝ Աստուածաշնչի վրայ,- աներկբայօրէն հաւաստում է Ժենիա Քալանթարեանը:- ...Սուրբ Գիրքը (Աստուածաշունչ) եւ մասնաւորապէս սաղմոսները, տեւական ազդեցութիւն են ունեցել նաեւ Հայ բանաստեղծական արուեստի վրայ: Սկսած Մաշտոցից մինչեւ Պարոյր Սեւակ եւ աւելի նորերը՝ Հայ բանաստեղծները ոճեր ու պատկերներ են առել սաղմոսներից, ազդուել նրանց վսեմ պարզութիւնից»⁵:

Միջնադարագէտ Արմանոյշ Կոզմոյեանը նոյնպէս հաստատագրում է, որ Նարեկացու քնարերգութեան ակունքը Աստուածաշունչն է, որը ձեւաւորեց հայ գրականութեան ոճը եւ յետագայ ուղղութիւնը: Իր պոէմում Նարեկացին օրհներգում է Աստուածային Սէրը՝ վեհացնող եւ հոգին ազնուացնող մի զգացում, որ միայն բարիք է ծնում: Ըստ Կոզմոյեանի՝ քրիստոնէական բարոյագիտութեան տեսանկիւնից Նարեկացին խորհրդանշօրէն պատկերում էր գոյը, իրականը՝ կրօնական երանգաւորումով եւ միջնադարեան գրականութեանը յատուկ ճոխ համեմատութիւնների, պատկերների եւ յարակրկնութիւնների կուտակումներով: «Նարեկացու պոէզիայի գեղագիտական հիմքը,- գրում է նա,- ամբողջապէս կրօնական զգացմունքի ալլարանութիւնն է»⁶, որ արտայայտում է հայ կրօնական քնարերգութեան երկփեղկուածութեան արդիւնքում: «Մէկը պահպանողականն է,- նշում է գրականագետը,- որ գնում է աւանդական շարականների եւ հիմների ուղիով, միւսը՝ ի դէմս Նարեկացու՝ նոր որակ է ձեւաւորում»⁷: գտնուելով հանդերձ քրիստոնէական բարոյագիտութեան եւ գեղագիտութեան ոլորտում:

Յետխորհրդային գրականագիտութեան՝ որեւէ առանձին գրողի ստեղծագործութեանը վերաբերող այսօրինակ հետախուզումները հաւաստում են, որ ժամանակն է՝ հայ դասական գրականութիւնը քննարկուի եւ մեկնաբանուի համապարփակ, ոչ միակողմանի, իր խորքային շերտերով:

Նման առաջին փորձ արել է Գեորգ Սարկաւազ Լուչչեանը Զրիստոնէական Աշխարհընկալումը Հայոց Գրական Անդաստաններում աշխատութեամբ, որտեղ հետազօտուած են Քուչակի, Սայեաթ-Նովայի, Յովհաննէս Թումանեանի եւ Վահան Տէրեանի ստեղծագործութիւնները՝ որպէս հայ հոգեւոր մշակոյթի եւ քրիստոնէական բարոյափիլիսոփայական ըմբռումների արտայայտութիւններ:

Գիրքն իր օրինութեան խօսքով բացում է Արարատեան Հայրապետական Թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նատասարդ Եպիսկոպոս Կճոյեանը, որը գտնում է, որ ներկայ դարում հայ գրականութիւնը պէտք է գնահատուի մի նոր՝ «Աստուածաշունչը որպէս գրական ատաղձ դիտարկելու» մեկնակէտից:

Ղուշեանի սոյն աշխատասիրութիւնը չորս անուանի բանաստեղծների ստեղծագործութիւնների նորովի ընթերցումն է, մի գործ, որի յաջող սկիզբը ենթադրում եւ պարտադրում է արգասատր շարունակութիւն:

Ղուշեանը (ծն. 1968ին Արարատի մարզի Վեդի քաղաքում) 1990ին աւարտել է Երեւանի Պետական Համալսարանի Աշխարհագրութեան Բաժինը: 1990-1994 ուսանել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գեորգեան Հոգեւոր Ծեմարանում: 1993-1994 ղեկավարել է ՀՀ Գիտութիւնների Ազգային Ակադեմիայի «Գիտելիք» գիտակրթական կազմակերպութեան Արարատի տարածաշրջանային վարչութիւնը: 1995ից առ այսօր ԵՊՀ Աստուծաբանութեան Ֆակուլտետի դասախօս է: 1998-2004 դասաւանդել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գեորգեան եւ Վազգէնեան Ծեմարաններում: 2002ից Արարատեան Հայրապետական Թեմի առաջնորդական փոխանորդի օգնականն է, իսկ 2005 Փետրուարից՝ «Չուարթնոց» տեղեկատուական-վերլուծական կենտրոնի տնօրէնը: Հեղինակ է մի շարք գիտական յօդուածների, իր իսկ դասաւանդած բուհական առարկաների դասագրքերի:

Յատով նկատելով, որ ժամանակի հայ գրականագիտութիւնը անհարկի անտեսել կամ նուազեցրել է «տիեզերքի, կեցութեան, քրիստոնէական ընկալումները փաստող արտայայտութիւնները (էջ 15),- հեղինակը գրում է, որ, կարիք է զգացւում ճշմարիտ, առաւել ներթափանց քննութեան ենթարկելու, դիցուք, հայոց ուշ միջնադարեան երկու կարկառուն ներկայացուցիչների՝ Նահապետ Քուչակի հայրէնները եւ Սայեաթ-Նովայի երգերը. ստեղծագործութիւններ, որոնք ցայսօր չեն դիտարկուել իրենց քրիստոնէական խորքի եւ հոգետարերքի մէջ»:

Կանգ չառնելով Քուչակի՝ միջնադարեան հայրէնների հեղինակ համարուելու բազում վեճեր յարուցած հարցի վրայ՝ Ղուշեանը կարեւորել է այն հանգամանքը, որ գեղարուեստական կատարելութեան հասցում ժողովրդագուսանական այս ստեղծագործութիւնները ոճական ընդհանրութիւն ունեն եւ կազմում են մեր միջնադարեան գրական ժառանգութեան մի կարեւոր մասը: Մինչեւ այժմ զանց է առնուած դրանց ներքին շերտերի հիմքում ընկած աստուածաշնչեան քեմաների առկայութիւնը, որն, ըստ Ղուշեանի, գերակայ է հայրէններում, ընդ որում նոյնիսկ այնտեղ, որտեղ, թում է, արտայայտուած են աշխարհիկ, զգացական սիրոյ պատկերներ: Այս դրոյթը թերեւս վիճալարոյց է, քանի որ, մեր կարծիքով, ազատամիտ Քուչակին չի կարելի ամբողջովին զետեղել քրիստոնէական գաղափարաբանութեան շրջանակներում: Ըստ մեզ՝ սիրոյ հայրէններում առկայ է տաղերգուի անձնական զգացմունքը, եւ արժէքների նոր ձեւաորոտող համակարգում սիրոյ թեման դուրս է գալիս աստուածաշնչային աշխարհայեացքի համատեքստից:

Նուշեանը, մեջբերելով դեռես դպրոցական դասագրքերից դասական դարձած «Երբ սէրն ի յաշխարս եկաւ, եկաւ ի սիրտս բնակեցաւ...» սկսուածքով սիրոյ յայտնի հայրենի՝ բացատում է զգայական սիրոյ տարրերի գոյութիւնը: Ըստ նրա, «խօսքը երկրից երկիր թափուող մի մեծ, տիեզերածաւալ սիրոյ մասին է, որի պատճառով աչքերը ոչ թէ սոսկ արցունք, այլ արիւն են ութում: Սա աւելի շուտ ողբերգականօրէն այլաշխարհիկ մի սէր է, որի խորքում մատնանշուած է աստուածային, երկնային սէրը: Սիրոյ մոտիւր,- շարունակում է նա,- պիտի ասել, առնչութիւններ եւ աղերսներ ունի «Երգ Երգոցի» հետ, որում այլաբանօրէն խօսուած է աստուածային Փեսայի (Յիսուս) եւ երկնահրաշ Հարսի (Քրիստոսի եկեղեցու) սուրբ միութեան մասին» (էջ 16-17):

Ի հաստատումն իր ասածի՝ նա մի հատում է բերում մէկ ուրիշ հայրենից.

*Ասես թէ եաղութն ես դու կամ զմրուխտ կամ ամբարինայ,
Թափած է քո վերայ վարդաջուր հազար փառայ...*

Եւ զուգահեռաբար ներկայացնում համապատասխան դրուագ «Երգ Երգոց»ից, որն իր ճոխ լեզուական արտայայտչամիջոցներով ու մտածողութեամբ նոյն պատկերային միջավայրն է յիշեցնում.

*Քո տունկերը քաղցրահամ պտուղներով,
Հինաներով ու նարդոսներով՝ նռնենիների դրախտ են
(«Երգ Երգոց», 4:13):*

Կամ՝

*Շրթունքները զմուս կաթող շուշաններ են,
Զեռքերը ոսկի մատնիներ են՝
Թարսիսի քարերով ընդելուզուած:
Որովայնը բանուած փղոսկր է՝
Շափուղաներով ծածկուած
(«Երգ Երգոց», 5: 13-14):*

Նոյն միտքն է արձարծում նաեւ «Ես աչք ու դու լոյս, հոգի, առանց լոյս՝ աչքն խաւարի...» սկսուածքով յայտնի հայրենի կապակցութեամբ. «Ակնյայտ է, կարծես, այս սերտ, կեանք հաղորդող սիրոյ ներքին ուղղուածութիւնը: Սորքային առումով դա այլ բան չի կարող նշանակել, քան Աստու եւ ընտրեալ մարդու, Քրիստոս-Փեսայի եւ Հարս-Եկեղեցու կապը. եթէ յանկարծ կտրուի այդ կեանք հաղորդող, արարչական սիրոյ կապը, մարդ կը մեռնի» (էջ 18):

Գեորգ Սարկաւազը դիտարկում է սիրոյ մի շարք այլ հայրեններ՝ «Առին գիւմ եարին սուրաթն, տարան Զին-Մաչին արմաղան...», «Քանի՛ ու քանի՛ ասեմ. «Զիւմ եարին կապան կարեցէք...», ինչպէս նաեւ առաջին հայեացքից շեշտուած զգայական եւ կրքոտ սիրոյ պատկերներ արտայայտող «Զկոճկիկն ալ արձակ արեր, լոյս դիպէր ի մէջ ծծերուն...», «Քո ծոցդ է ճերմակ տաճար, քո ծծերդ է կանթեղ ի վառ...» սկսուածքներով հայրենները՝ եզրայանգելով, որ այստեղ կարեւորում է այն հանգամանքը, որ «մարդ էակը (տուեալ դէպքում՝

կինը - Ա.Վ.) տաճար է, ինչպէս եւ խորհրդարաննում է Աւետարաններում: Ուստի եւ պատահական չէ, որ սիրուհին օժտուած է տաճարային յատկանիշներով: ...մարդը մեծ, տիեզերական էակ է, առաւել եւս՝ սիրով տաճարացեալ Աստուծոյ Հարսը, որի գեղեցկութիւնը, այո՛, կարող է խամբեցնել մինչեւ իսկ աստղերի լոյսը» (էջ 18-19):

Պանդխտութեան քեմայով գրուած հայրենների առիթով համաձայնելով հետազօտողների կարծիքին, թէ դրանք արտայայտում են մեր ժողովրդի պատմական ճակատագրի բերումով պանդուխտի ցուպը բռնած տարագրի հոգեկան ծանր վիճակը, Դուշեանը գտնում է, որ այդպիսի մօտեցումը, սակայն, միակողմանի եւ մակերեսային է, քանի որ, թում է, դրանք «Չրի նման ճապղած» պանդուխտի տառապալից ու անելի հոգեվիճակի արտացոլումն են, մինչդեռ աւելի խորը քննելիս «դրանք սերտ առնչութիւններ ու աղերսներ են ի յայտ բերում աստուածաշնչեան գաղափարների, մարդու ընկալման սուրբգրային պատկերացումների հետ: այն, որ առաջին արտաքսեալ մարդը Ադամն էր, որին դրախտից յետոյ երկիրը միշտ թուաց տաժանելի օտարութիւն: Ի՞նչ էր դա, եթէ ոչ պանդխտութիւն կամ օտարուածութիւն,- գրում է նա եւ շարունակում,- առերեւոյթ երկրային, իրական պատկերներ հիւսելով՝ Քուչակը պանդխտութեան հայրէններում այլաբանօրէն արտայայտել է Աստուածաշնչից ածանցուած այդ մտքերն ու զգացումները՝ ցոյց տալով, թէ մարդը օտար է եւ պանդուխտ է երկրի վրայ եւ մշտապէս փնտրում է մի հայրենի եզերք, սէր եւ հարազատութիւն» (էջ 20): Եւ, որպէս իր ասածի վկայութիւն, բերում է Քուչակի՝ իմաստային ամբողջութիւն կազմող եւ իրար յաջորդող հայրենները.

Ճամփորդ քեզ յանժամ ասեմ, որ զճամփի դատրն գիտենաս.
 Մնել ես եւ աշխարհս եկել, սուր խապար, թէ ուստի՞ կու գաս.
 Եկել յօտար երկիր, մէկ ցուցու, թէ ինչու կու կենաս.
 Մեռնիս դու եւ ի հող մտնուս, մէկ ասա, թէ ո՞ւր կու գնաս:
 Ժամ-ժամ զիմ դարիպութիւնս ես յիշեմ եւ նստիմ ու լամ.
 Ճապղել եմ Չրի նման, ի յօտար երկիր կու գնամ.
 Աստուած գիտէ այն ճամփան, ուր երթամ կամ ուր տի մնամ:
 Ո՞վ կապէ խաչն իմ սրտիս կամ հողվարք, որ ես դուրանամ:
 Յորեկն եմ նետի նման, ուր նետեն, ես ի հոն կենամ.
 Գիշերն՝ աղեղան նման, ես լարթափ ի վար կու մնամ:

Քուչակի խոհախրատական հայրեններում աստուածաշնչային սիւժեները եւ խորհրդանիշներն արդէն պատկերում են չմիջնորդաւորուած, ոչ-փոխաբերական ձեւով: Այստեղ արտացոլուած են Քրիստոսի, Դաւիթ Մարգարէի, Յովհաննէս Առաքեալի հետ կապուած դրուագներ, ինչպէս նաեւ Սողոմոնի առակները եւ նորկտակարանային խորիմաստ ճշմարտութիւններ: Այսպէս. հայրեններից մէկում, նկատի ունենալով ձերունագարդ Յովհաննէս Առաքեալի՝ իր ձեռքով իր տապանը փորելու եւ այնտեղ հանգչելու աւանդութիւնը, Քուչակը գրում է.

*Ուժ որ շատ պիտի ապրիլ, թող խելօք կենայ թէ պիտի-
Փորէ իւր ձեռօք տապանն, ինքն ի ներս մտնու կենդանի...*

Ահա մի հայրենի՝ Դաւիթ Սաղմոսողի վերաբերեալ.

Դաւիթ Մարգարէն ասաց, թէ չարկամ ունիս, նա սիրէ-

Ձձեռէն բռնէ ի տուն տար, ու անոյշ լեզուովդ նա պատուէ-

Չկթխայն լից ի յափն տուր, իւր բերնով գինքն անիծէ-

Թէ աստուած գայս տուն շէն պահէ, ու գչարկամն գլխավարէ:

Յիսուսի երկրորդ գալատեանն է նուիրում հետեւեալ հայրենը, որի միտքը քաղում է Մատթեոսի ու Մարկոսի Աւետարաններից.

Ի յարեւելից ի վար ելեր մեր տէրն ու կուգայ-

Ելէք, որ ի դէմն երթանք, որ նորա սիրտն չի մնայ-

Հնցկուն թագաւոր փատիշահ ոչ եկեր է եւ ոչ պիտի գայ-

Յարեւելք ինքն է նստեր, յարեւմուտք հիմքն կու խաղայ:

«Դուք էք երկրի աղը...» (Մատթ. 5: 13) յայտնի արտայայտութիւնը իրովի արձագանգ է գտել քուչակեան մի այլ հայրենում.

Չաղն գէմ բարի ասեն, տէր Յիսուս որ գայս կու ասէ-

Չանհամն ինքն ի համ բերէ ու զնեխածն անուշացնէ-

Էնց մարդ որ շնորհք ունի կամ ուսմամբ կամ ի բնութենէ-

Համեմ ու հոգոց մարդկան ու գհիւանդ հոգիս բժշկէ:

Քուչակի խոհախրատական հայրենների մասին խօսքը կարելի է աւարտել բարոյախօս-Քուչակի քրիստոնէական յորդորով.

ԿաՖա մի կամիմ ասել, որ արժէ ճուհար մի բոլոր-

Մարմինդ է ի նաւ նման, խելքդ ծով՝ թէ չունիս ժխոր-

Չմիտքդ նաւավար դու տես, որ բարձեր է գանձ շահաւոր-

Թէ ի եզր ծովուդ հանես, նա առնէ զքեզ փառաւոր:

Ինչ վերաբերում է հայկական ու շ միջնադարի մէկ այլ կարկառուն բանաստեղծի՝ Սայեաթ-Նովայի գրական ժառանգութեան քննութեանը, ապա Դուչչեանը իր ուշադրութիւնը կենտրոնացնում է մեծ տաղերգուի ստեղծագործութեան վերջին շրջանի վրայ, երբ նա եղել է քահանայ՝ Տէր Ստեփանոս անունով, ապա՝ 1768ից՝ կուսակրօն արեղայ, եւ իր մահկանացուն կնքել որպէս ճշմարիտ քրիստոնէայ՝ նահատակուելով քշմամու սրից⁸:

Ուշ միջնադարի գրականութեանը վերաբերող իր աշխատութեան մէջ Հենրիկ Բախչինեանը գրում է, որ ինչպէս ԺԸ դարի ողջ հայ դասական քնարերգութեան, այնպէս էլ իր դաւանանքը եւ ազգային սրբութիւնները հպարտօրէն կրող Սայեաթ-Նովայի ստեղծագործութեան վրայ մեծ է Նարեկացու ազդեցութիւնը⁹, եւ որ նրա «աշխարհայեացքի, կենսափիլիսոփայութեան, լեզուի եւ ճաշակի վրայ որոշ չափով ներգործել է նաեւ եկեղեցական եւ հոգեւոր-կրօնական գրականութիւնը: Նրա համար բարոյականութեան լուսազոյն ու սուցարան են եղել Աւետարանը, Յայամաւուրքը, Հարանց վարքերը»¹⁰:

Այնուամենայնիւ, Գեորգ Մարկաւագլը իր հետազօտութեան մէջ առաւել հանգամանալից է անդրադարձնում այս հարցին: Սայեաթ-Նովայի վերջին շրջանի բանաստեղծութիւններից մէկը՝ «Աստուծ խիալ արից, սրվթա...» սկսուածքով, որը պատկերաւոր կերպով վերարտադրում է Ադամ-Եւայի արարչագործութեան, նրանց պատուիրագանցութեան, Աստուծոյ առաջ չքմեղանալու, դրախտից արտաքսուելու մասին աստուածաշնչեան սխօժէն, հեղինակը մէջբերում է ամբողջովին՝ ապացուցելու համար, որ Սայեաթ-Նովան իրաւամբ շարունակել է հայ գրականութեան դաւանաբանական նախահիմքերը եւ ներկայանում է իբրեւ Աստուածաշնչին քաջատեղեակ հաւատաւոր մեկնարան:

Ղուշչեանը աստուածաշնչեան մէկ այլ մտտի է մատնանշում նաեւ «Ամէն մարք չի կանա խըմի՝ իմ ջուրն ուրիշ ջրրէն է...» հանրայայտ բանաստեղծութեան «Բունիաթս աւազ չիմանաս՝ քարափ է, քարուկրրէն է» տողի պատկերում՝ զուգահեռ խորհրդանիշ բացայայտելով աստուածային փրկարար վէմի՝ Քրիստոսի հետ: Մինչդեռ Սայեաթ-Նովայի այս տաղի թերեւս շատ աւելի հաւաստի արծագանգն է Մատթեոսի Աւետարանում (3: 24-27) պատմուող Քրիստոսի հետեւեալ առակը. «Ամենայն որ լսէ զբանս իմ զայսոսիկ եւ առնէ զսոսա՝ նմանեցէ առն իմաստնոյ որ շինեաց զտունն իւր ի վերայ վիմի. իջին անձրեւք եւ խաղացին գետք, շնչեցին հողմք եւ բախեցին զտունն, եւ ոչ կործանեցաւ, քանզի ի վերայ վիմի հաստատեալ էր: Եւ ամենայն որ լսէ զբանս իմ զայսոսիկ եւ ոչ առնէ զսոսա՝ նմանեցէ առն իմարի որ շինեաց զտունն իւր ի վերայ աւազոյ. իջին անձրեւք, յարեան գետք, շնչեցին հողմք, հարին զտունն եւ անկաւ. եւ էր կործանուամն նորա մեծ յոյժ»¹¹:

Բանաստեղծի բարոյագիտական հայեացքները նոյնպէս բխում են քրիստոնէական պատգամներից.

*էն բանն արա, վոր Աստուծու շարքումն է,
Խրրատնիրն գրրած Հարանց վարքումն է... -*

գրում է մարդասէր բանաստեղծն ու յորդորում.

*Թէ գուզիս, վոր դատաստամ չը տեսանիս՝
Վանք սիրէ, անապատ սիրէ, քար սիրէ:*

Գրքում բազմաթիւ են Սայեաթ-Նովայի տաղերից քաղուած դրուագները՝ ձօնուած Մշոյ Սուրբ Կարապետին, Յովհաննէս Մկրտչին եւ նրա գործունէութեանը, Սուրբ Երրորդութեանը, որոնք հաւաստիօրէն արտացոլում են սուրբգրային աւանդութիւնները:

Սայեաթ-Նովայի սիրոյ երգերն անգամ, ըստ Ղուշչեանի, կրօնական հիմքեր ունեն եւ առնչում են «Երգ Երգոց»ի հետ: Նա մէջբերում է «Քու էշ-խրն ինձ մաստ արաւ. յիս զարթուն իմ, սիրտս է քընած...» սկսուածքով բանաստեղծութիւնը եւ հենց առաջին տողի «յիս զարթուն իմ, սիրտս է քընած» դրուագը զուգահեռում է «Երգ Երգոց»ի «Ես քնած եմ, բայց իմ սիրտն արթուն է» արտայայտութեան հետ (Սաղմոս 5: 12): «Առհասարակ Սայեաթ-Նովայի ողջ ստեղծագործութիւնը ներթափանցուած է երկնային կրակի՝ սիրոյ զգացո՞-

դուժեամբ,- եզրափակում է իր նկատառումները հեղինակը:- Նրա տարերքը, աշխարհընկալման կերպն ու ելակէտը Սէրն է, բանաստեղծական նորովի հաստատումը նոյն «Երգ Երգոցի» յայտնի ասոյթի՝ «Քանզի հօօր է սէրը մահուան պէս» (Սաղմոս 8: 6) կամ այն խօսքի, թէ «Առատ ջրերը չեն կարող սէրը մարել» (Սաղմոս 8: 6) (էջ 31):

Գրքի յաջորդ՝ Թումանեանին վերաբերող հատուածի մասին խօսելուց առաջ անդրադառնանք հայ գրականագետների՝ մեզ հետաքրքրող հարցի կապակցութեամբ արած դիտարկումներին:

Ակադեմիկոս Էդուարդ Ջրբաշեանը, նշելով, որ *Աստուածաշունչը* մեծ ազդեցութիւն է ունեցել Թումանեանի՝ իբրև մարդ եւ բանաստեղծ, ձեւատրման վրայ, գրում է, որ իր ստեղծագործութիւններում Թումանեանը «*Հոգեբանական յենակէտեր*» է փնտրել եւ գտել *Աստուածաշունչի* էջերում, դիմել է նրա կերպարներին, թեմաներին, եւ լեզուական արտայայտչամիջոցներին, որոնք համահունչ էին իր մտածողութեանն ու գիտակցութեանը: Ջրբաշեանը մատնանշում է բանաստեղծի՝ «*աստուածաշնչային յղումների զրդիչ ոյժն ու նպատակը*»՝ գրելով. «*Աստածաշնչային մոտիւններին ու ոճերին Թումանեանը դիմում էր այն պատճառով, որ դրանց մէջ տեսնում էր մարդկութեան հազարամեակների կենսափորձի եւ բարոյական ըմբռնումների լաւագոյն խտացումը: Նա համոզուած էր, որ յաւերժական արժէք ունեցող պատկերների մէջ մարմնաւորուած այդ ըմբռնումներն ընդունակ են անմիջական հոգեւոր կապ ստեղծելու ժամանակների, ազգերի եւ սերունդների միջեւ*»¹²: Նրան երկրորդում է Դուլչեանը՝ հաւաստելով, թէ «*Քրիստոսի Անձի հետ կապուած դրուագները... ոչ թէ աւարտուած եւ պատմական անցեալին յանձնուած իրողութիւններ են, այլ համաժամանակեայ իրադարձութիւններ, որ տեղի են ունեցել, տեղի են ունենում եւ տեղի են ունենալու*» (էջ 33)¹³:

«Թումանեանը եւ քրիստոնէութիւնը» հարցի նկատմամբ մի փոքր այլ մօտեցում է հանդէս բերում Ազատ Եղիազարեանը: Ըստ նրա՝ քրիստոնէական աշխարհայեցողութիւնը տարրալուծում է ժողովրդական կենսափոխալուծութեան մէջ եւ կազմում նրա էական բաղադրիչ մասը: Գրականագետի մեկնաբանութեամբ՝ քրիստոնէութիւնը Թումանեանի աշխարհընկալմամբ հանդէս է գալիս մի իրատեսակ արտայայտութեամբ, որ նա անուանում է «*ժողովրդական քրիստոնէութիւն*», եւ որը առաւելապէս հիմնուած էր ժողովրդական ողջախոտութեան սկզբունքների վրայ: «*Աւետարանը չէ, որ ուղղութիւն էր տալիս Թումանեանի հոգուն,- գրում է մեկնաբանը,- այլ այս քրիստոնէութիւնը*»¹⁴: Ըստ Եղիազարեանի՝ Թումանեանի երգած նախաստեղծ Արարիչը ատելի նիւթական, իրական արմատներ ունի. նա մօտենում, բայց չի նոյնանում քրիստոնէական Աստծուն: «*Աւելի ճիշտ,- գրում է նա,- Նոր Կտակարանի Աստուածը թաթախուել է իրական կեանքով, ժողովրդական մտածողութեամբ ու մեկնաբանութիւններով եւ դարձել Թումանեանի աստուածը, որը պաշտուում է ոչ թէ տաճարներում, այլ բնութեան ու Տիեզերքի անսահմանութեան մէջ*»¹⁵:

Վուշչեանը, քննելով Թումանեանի մի շարք յօդուածներ եւ բանաստեղծութիւններ, ի յայտ է բերում սուրբգրային քննաների քունանեանական մեկնութիւններ՝ այդ առիթով անելով հետեւեալ դիտարկումը. «...դարերով ըմբռնուած, եկեղեցիով եւ ուղիղ դաւանանքով հաստատագրուած յաւիտենական ճշմարտութիւնները 19-20րդ դարերում հայ գեղարուեստական գրականութեան եւ բանաստեղծութեան մէջ սկսում են ոչ թէ ժխտուել, այլ ընկալուել նորովի ու կենդանի՝ բանաստեղծական զգացումների կենարար ազդեցութեամբ. տուեալ դոգման արդէն ոչ թէ դաւանուում է շուրթերով կամ արձանագրում, այլ աւելի շուտ ընկալում է իրբեւ կենդանի զգացողութիւն, օրեկտիւ ճշմարտութիւնից վերածուում է սուրեկտիւ ապրումի, անձնաւորում է եւ անհատականացում՝ անցնելով բանաստեղծական «ես»ի ոսպնեակի միջով» (էջ 35): Քրիստոնէական ճշմարտութիւնների անհատականացման օրինակներ են Գեորգ Սարկաւազի նշած բանաստեղծութիւնները՝ «Յարութիւն», «Երբ Ես Տխուր, Յուսահատ...», «Քրիստոս Անապատում», «Բանաստեղծը Ծերացել Է...», «Ամառային Երեկոյ», «Աստուծոյ Սպառնալիքը», «Գերութեան Մէջ», «Այստեղ Մի Վսեմ Խորհուրդ Է Ապրում...», «Ընտրեալը» եւն., որոնք ներթափանցում են քրիստոնէական գաղափարաբանութեամբ եւ արտացոլում են աստուածաշնչեան պատուիրանները:

Այս քննան առանձնապէս ցայտուն է դրսեւորում Թումանեանի քառեակներում, որոնք՝ որպէս փիլիսոփայական խտացումներ, նրա ստեղծագործական ուղու իրօրինակ ամփոփումն էին, եւ որոնց մեծ նշանակութիւն էր տալիս բանաստեղծը: *Նա իր ժամանակի յուզմունքներն ու մտածմունքներն արտայայտեց հինաւուրց քառեակներով,* - գրում է ակադեմիկոս Լեւոն Հախվերդեանը, - *որ խորապէս հարազատ են հայ բանաստեղծութեան աւանդներին եւ ձեւի սեղմութեամբ՝ մտաբերենք Նահապետ Քուչակի հայրէնները, եւ արծարծումների էութեամբ՝ մտաբերենք Գրիգոր Նարեկացու «Մատեան Ողբերգութեան»ը, որ Թումանեանի ձեռքի գիրքն է եղել ու մշտական հիացմունքի առարկան»¹⁶: «Իր ժամանակի յուզմունքներն ու մտածմունքները» դրդում են խորապէս տառապող բանաստեղծին՝ հոգու խաղաղութիւն եւ անդորրութիւն գտնելու համար դիմել «առատ, անհատ», «Շոայլ», «Անճառ Մին» (այսինքն՝ անճառելի, միակ), «միշտ կենդանի» Աստծուն.*

*Ո՛վ անճառ Մին, որ ամէնին միացնում ես մի կեանքում,
Ամէն կեանքում ու երակում անտես, անկէզ բորբոքում,-
Ողջ ազատ են ու հարազատ էս աշխարհքում Քեզանով,
Ողջը Քո մէջ՝ անմա՛հ, անվերջ՝ Քեզ են երգում Քո ձէնով...*

Այս ու մի այլ՝ *«Աստու բանտն են տաճարները - աշխարհներում բովանդակ...»* սկսուածքով քառեակները քննելիս Գեորգ Սարկաւազը պարզում է դրանց քրիստոնէական ենթաշերտերը՝ վերջինիս կապակցութեամբ գրելով, որ դա «Հին կտակարանի «Մի՞թէ Աստուած բնակուելու է մարդկանց հետ երկրի վրայ: Եթէ երկինքն ու երկնքի անսահմանութիւնները քեզ բաւական

չեն, ապա ինչպէ՞ս կարող է բաւականացնել իմ շինած այս տունը» (Գ. Թագ. 8: 27) խօսքերի բանաստեղծական այլաձեւումն է» (էջ 40):

Քրիստոնէական աշխարհընկալման տեսանկյունից հետագօտելով Թումանեանի՝ «Աստծոյ ներկայութեան, նրա խորհրդաւոր էութեան ու ամէնուրեքութեան զգացողութեամբ», «աստուածակենտրոն մտածումներով ներթափանցուած» բազմաթիւ քառեակները՝ Դուշեանը, համապատասխան զուգահեռներ բերելով ատարանական թեմաների եւ արտայայտութիւնների միջեւ, վստահութեամբ պնդում է, որ Թումանեանն իր մտածելակերպով, հոգեկերտուածքով եւ քրիստոնէական աշխարհընկալմամբ իրապէս ազգային բանաստեղծ է:

Գեորգ Սարկաւազ Դուշեանը նոյն մօտեցմամբ է անդրադառնում նաեւ հայ նոր գրականութեան մէկ այլ խոշոր երեւոյթի՝ Տէրեանի տեղեւագործութեանը՝ որակելով նրան որպէս «քնարական-եթերային հոգեկերտուածքի» տէր եւ ընտիր հայերէնով ստեղծագործող բանաստեղծ, որն «խկապէս քրիստոնեայ է ուղնուծուծով, էութեամբ, տրամադրութիւնների եւ զգացողութիւնների որակով եւ ոչ թէ միայն աստուածաշնչեան թեմաների կամ սիւժէների բանաստեղծական մշակումներով» (էջ 42):

Ինչպէս յայտնի է, Թումանեանի նման Տէրեանի հայրն էլ է հոգեւորական եղել, եւ նրանց՝ Տէր Թադէոսի եւ Տէր Սուքիասի գաւակները մեծացել են բարի, առաքինի, ազնիւ ու զարգացած մարդկանց գերդաստանում, որ ներթափանցուած էր քրիստոնէական ուսմունքի եւ վարքութարքի, գրի ու գրականութեան հանդէպ սիրոյ ու յարգանքի մթնոլորտով: Տէր Սուքիասը, նոյնիսկ, յիսուն տարեկանում ինքնուրոյն կերպով ռուսերէն է սովորել՝ ռուս ականատր գրող Ֆեոդոր Դոստոեւսկու տեղեւագործութիւնները բնագրով կարդալու համար: Եւ այսպիսի հոգեւոր միջավայրում մեծացած բանաստեղծները պէտք է որ իրենց ինքնագիտակցութեան մէջ կրէին աստուածաշնչեան գաղափարախօսութիւնը, որը եւ արտացոլուել է նրանց գործերում քիչ թէ շատ ակնյայտ դրսեւորումներով: Տէրեանի քնարերգութեան մէջ, սակայն, քրիստոնէական աշխարհընկալումը եւ յախտենական ճշմարտութիւնները արտացոլում են անուղղակիօրէն, անշօշափելի, միջնորդաւորում, «որպէս բանաստեղծական զգացումի, ապրման տեսակ կամ արտայայտութիւն» (էջ 43):

Այս հայեացքով է դիտում նա դասական դարձած «Տխրութիւն» խորհրդանշական բանաստեղծութիւնը, որը լի է անորոշ, անմեկնելի, առեղծուածային պատկերներով.

*Մահուն քայլերով, աննշմար, որպէս քնքոյշ մութի թեւ,
Մի ըստուեր անցաւ՝ ծաղիկ ու կանաչ մեղմիւ շոյելով-
Իրիկնաժամին, թփերն օրօրող հովի պէս թեթեւ
Մի ուրու անցաւ, մի գունատ աղջիկ ճերմակ շորերով:
Արձակ դաշտերի ամայութեան մէջ նա մեղմ շնջաց,
Կարծես թէ սիրոյ քնքոյշ խօսք ասաց նիրհող դաշտերին-
Մաղիկների մէջ այդ անուրջ կոյսի շուկը մնաց,*

Եւ ծաղիկները այդ սուրբ շշուկով իմ սիրտը լցրին...

Մտորելով այս խորհրդանշական բանաստեղծութեան պատկերների մասին՝ Ղուշչեանը հնարատր է համարում «անուրջ կոյսի» նոյնացումը Մարիամ Աստուածածնին, իսկ ծաղիկները, ըստ նրա, մաքրագործուած սրբերն ու արդարներն են՝ յիշեցնելով, որ միջնադարեան քրիստոնէական տաղերգութեան մէջ ծաղիկները խորհրդանշում են վերջիններիս: Նա միանգամայն համոզուած է, որ «*ողջ բանաստեղծութիւնը կարծես թէ գրուած է մի վերին նկատառումով՝ կատարել, կայացնել, իրագործել մաքրագործութեան մի խորին խորհուրդ*» (էջ 44), մաքրագործութիւն, որի «*ծէսն իրագործելու*» առաքելութիւնն ունեն Տէրեանի բանաստեղծութիւնները: Այն ընկալում է ենթագիտակցօրէն, որպէս խորհրդանշի վերածուած անհատական ապրում, որը նուրբ է, օղեղէն ու անանձնական, եւ «*գաղտնագրուած է*» բանաստեղծութիւնների ներքին ենթաշերտերում, երբ Աստուած կամ Քրիստոս պատկերուած են ոչ թէ իրենց անուններով, այլ իրենց բնորոշ յատկանիշներով: Ի հաստատումն իր խօսքերի՝ Ղուշչեանը մէջբերում է «*Գիշերն իջաւ սեւ ու շարաչք...*» սկսուածքով բանաստեղծութիւնը, որ նա բնութագրում է որպէս «*բանաստեղծական-նարեկացիական ոգորումների*» իրատեսակ աղօթք: Նրա մեկնաբանութեամբ՝ բանաստեղծութեան վերջին տողի («*Գուցէ եւ նա մեր ցաւն զգայ*») անորոշ, կարծես թէ անհասցէ Նա-ն խորհրդանշում է Աստծուն, իսկ ողջ բանաստեղծութիւնը շնչում է Նարեկացու աղօթագրքին բնորոշ լեզուամտածողութեամբ ու պատկերային արտայայտչականութեամբ (լուսէ հրաշք, խաւարակոտ մշուշ, զնդան անդուտ եւն.):

Ամբողջովին քրիստոնէական ոգով է ներշնչուած նաեւ հետեւեալ բանաստեղծութիւնը.

*Ոչ ծաղրածու զուարճարեր, ոչ խօսքերի վարժ վարպետ -
կոշուած ես դու վերին կամքով, որպէս պայծառ մի ասպետ:
Դու մարգարէ պիտի լինես, խաշակիր եւ մարտիրոս,
Խարոյկ ու խաշ պիտի ելնես - ոչ իբր ստրուկ, այլ հերոս...
Խօսքըդ պիտի լինի դաշո՛յն, սիրտը՝ կրակ ահաւոր,
Պիտի լինես հեզ, որպէս որբ, վեհանձն, որպէս թագաւոր...
Պիտի բանաս սիրտդ բորբոք ամէն սրտի դէմ,
Պիտի լինես միշտ հրահրուն եւ միշտ լուսեղէն:
Եւ սնտոյ օրերի մէջ պիտի վառուես որպէս ջահ,
Որպէս բարիք ընդունես միշտ ե՛ւ տանջանք, ե՛ւ մահ...*

Այստեղ նոյնպէս առկայ են յատկանշական պատկերները եւ խորհրդանշային համակարգը: Այսպէս. «*Ոչ խօսքերի վարժ վարպետ*» արտայայտութիւնը, - գրում է հեղինակը, - *կարծես թէ յիշեցնում է Պօղոս Առաքեալի խօսքը («Ու իմ խօսքս եւ քարոզութիւնս ոչ թէ մարդկային իմաստութեան համոզիչ խօսքերով էր, այլ Հոգու համոզիչ զօրութեամբ» (Ա. Կորնթ. 2: 4), խաշ ելնելը բնականաբար յիշեցնում է Յիսուսի խաշելութեան, իսկ «Պիտի լինես հեզ, որպէս որբ, վեհանձն, որպէս թագաւոր» խօսքը կարծես թէ քրիստոսեան խօսքի*

(«օձերի պէս խորագէտ եղէք եւ աղանձների պէս հեզ» (Մատթ. 10: 16) մէկ այլ տարրերակն է կամ նմանակը, իսկ «միշտ հրահրուն եւ միշտ լուսեղէն» լինելը խորհրդանշում է օձեալ վիճակ, Մկրտութիւն՝ Սուրբ Հոգով եւ հրով: Եւ, վերջապէս, տանջանքն իբրեւ բարիք ընդունելու վերանձնական պատրաստակամութիւնն ինքնին քրիստոնէական հոգեվիճակի եւ աշխարհայեացքի արտայայտութիւնն է» (էջ 48):

Գէորգ Սարկաւազը աւետարանական-վախճանաբանական պատկերների անուղղակի արձագանգն է տեսնում «Նմանութիւն», "Fatum", «Տխուր մեռան կապուտաշեայ...», «Հրով արթնացած սիրտս...», «Ես ձեզ բերի բարի լուր...» սկսուածքներով բանաստեղծութիւններում (նկատենք, որ հեղինակը ուշագրաւ աստուածաշնչեան ենթատեքստ է յայտնաբերում նաեւ Տէրեանի՝ Հոկտեմբերեան Յեղափոխութեանը նուիրում «Յարեաւ յաւէտ, յարեաւ հոգին իմ որր...» եւ «Եկաւ երկաթ քայլով...» սկսուածքներով հանրայայտ բանաստեղծութիւններում, որոնք նոյնպէս, ըստ նրա, ներթափանցում են աւետարանական խորհրդանիշներով եւ իրականութեան ընկալման, եւ արտացոլման իւրայատկութեամբ):

Եթէ Տէրեանի վերոյիշեալ բանաստեղծութիւնները անուղղակիօրէն, այլաբանօրէն են առնչում Սուրբ Գրքի թեմաներին ու պատկերներին՝ ունենալով հանդերձ քրիստոնէական պատկերաւոր մտածողութեան ոճական-գաղափարական ներքին համակարգ, ապա «Պէտք է յամառ դեռ կիզեն...» սկսուածքով բանաստեղծութիւնն արդէն հաստատապէս արտայայտում է բանաստեղծի վառ հաւատով լի սպասումը Քրիստոսի երկրորդ գալստեանը: Ահա այդ բանաստեղծութեան՝ գրքում մէջբերուած վերջին երեք քառատողը.

... Նա թեւերով հրավառ,
 Նա գօրքերով լուսեղէն
 Գուցէ գալիս է արդէն
 Դէպի երկիրն իմ խաւար:
 Սի՛րտ, հաւատա՛, որ լուսէ
 Վառ է մի նոր Բեթղեհէ՛մ —
 Գուցէ պարզուած են արդէն,
 Բաց են թեւերը բոցէ...
 Նա պիտի գայ լուսեղէն,
 Նա պիտի գայ հրավառ —
 Դէպի երկիրն իմ խաւար —
 Խոր է խորհուրդն ու վսեմ...

Հեղինակն առանձնացնում է Տէրեանի բանաստեղծութեան առաջին եւ վերջին քառեակների «խոր է խորհուրդն ու վսեմ» պատկերը՝ որպէս բանաստեղծութեան հիմնական եւ կրկնուող թեմա, եւ զուգորդում է այն աստուածաշնչեան «Աստուած նոյնն է երէկ, այսօր եւ յաւիտեանս յաւիտենից» ասոյթի հետ:

Որպես ասուածի ամփոփում՝ Գեորգ Սարկատազը վստահաբար գրում է, որ եւ՛ նոր շրջանի հայ բանաստեղծներ թումանեանն ու Տերեանը, եւ՛ յետագայ բանաստեղծները (մասնաւորաբար Եղիշէ Չարենցն ու Յովհաննէս Եփրազը)՝ որպէս մեր ժողովրդի բարոյափիլիսոփայական եւ գեղագիտական գիտակցութեան կրողներ, շարունակել են նախորդների գրական աւանդները եւ իրենց ստեղծագործութիւններում այս կամ այն չափով արժարժել աստուածաշնչեան ճշմարտութիւններ՝ «սրբազան դոգմայի մարմնաւորումը եւ անցկացումը բանաստեղծական-ներանձնական «ես»ի ոսպնեակով, «խոր» ու «վսեմ խորհուրդի» իրականացումը կամ անհատականացումը պատմական-ժամանակային իրադրութեան մէջ» (Էջ 51):

Խորապէս տիրապետելով իր նիւթին՝ Գեորգ Սարկատազ Դուշշեանը, մանրաբնին ուսումնասիրելով հոգեւոր եւ գրական իրողութիւնները, արել է երբեմն վիճայարոյց, հակասական, անսպասելի, բայց եւ ուշագրաւ ու հետաքրքիր դիտարկումներ եւ, որ ոչ պակաս կարեւոր է, շարադրել է իր մտքերը ընտիր, կիրք, անթերի եւ աչք շոյող հայերէնով:

Յանկալի կը լինէր օգտագործուած գրականութեան ցանկը տեսնել աւելի խնամքով կազմուած, ըստ ներքին դասդասման, վերջապէս՝ ըստ այբբէնական կարգի:

Երիտասարդ եւ լրջմիտ հետազօտողը աւարտել է նաեւ «Տաղաւար Տօները եւ Նրանց Արտագոյումը Հայ Գրականութեան Էջերում» հետաքրքիր եւ ուսանելի աշխատութիւնը, որը շուտով լոյս կը տեսնի:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- ¹ Հ. Գ. Բախշինեան, Ս. Ն. Սարինեան, *Հայ Գրականութիւն, Դասագիրք Հանրակրթական Դպրոցի 9-րդ Դասարանի Համար*, Երեւան, «Լոյս», 1993, էջ 92:
- ² Արշալոյս Ղազինեան, *Գրիգոր Նարեկացի. Բանաստեղծական Արուեստը*, Անթիլիաս, տպարան Կիլիկիոյ Հայոց Կաթողիկոսութեան, 1995, էջ 129:
- ³ Արշալոյս Ղազինեան, *Մաշտոցից Մինչեւ Նարեկացի*, Երեւան, ԸԵԸԾ «Գիտելիք» ընկերութիւն, 1988, էջ 44:
- ⁴ Նոյն, էջ 48:
- ⁵ Ժենիա Քալանթարեան, *Գրիգոր Նարեկացու «Մատեան Ողբերգութեան» Պոէմի եւ Սաղմոսների Առնչութիւնները*, Ս. Էջմիածին, 1997, էջ 5-6:
- ⁶ Արմանոյշ Կոզմոյեան, *Հայոց եւ Պարսից Միջնադարեան Քնարերգութեան Համեմատական Պոետիկան 10-16 դդ.*, Երեւան, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» Հրատարակչութիւն, 1997, էջ 53:
- ⁷ Նոյն, էջ 92:
- ⁸ Յակոբ Մանանդեան, Հրաչեայ Աճառեան, *Հայոց Նոր Վկաները (1155-1843)*, Վաղարշապատ, Ս. Էջմիածին, 1903, նաեւ՝ Մեսրոպ արք. Աշճեան, *Սուրբերը եւ Մենք*, Նիւ Եորք, Ազգային Առաջնորդարան, 1993:
- ⁹ Տէր Ստեփանոսը 1761ին գրչագրել է Նարեկացու աղօթաձայնները:
- ¹⁰ Հենրիկ Բախշինեան, *XVII-XVIII Դարերի Հայ Գրականութիւնը*, Երեւան, «Լոյս», 1999, էջ 266:

¹¹ Աստուածաշունչ Մատենան, Վիեննա, 1929:

¹² Էդուարդ Ջրբաշեան, «Աստուածաշնչային Մտտիւները Թումանեանի Ստեղծագործութեան Մէջ», Թումանեանի Գրական Ժառանգութիւնը, Երեւան, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» Հրատարակչութիւն, 2000, էջ 253:

¹³ Տե՛ս՝ Յովհ. Թումանեանի մտորումները Քրիստոսի շարչարանքների մասին. «Եւ ահա նա խաչուում է ամէն տեղ աշխարհքում. աշխարհքի ամէն անկիւնում եւ մեր անկիւնում ամէն օր, ամէն օր, ու ամէն օր մենք խաչելութեան հանդիսատես ենք կամ մասնակից: Եւ դրա համար էլ նա Մեծ է ու Անմահ» (Յովհաննէս Թումանեան, Երկերի Լիակատար ժողովածու, հ. 6, Երեւան, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» Հրատարակչութիւն, 1994, էջ 310):

¹⁴ Ազատ Եղիազարեան, «Թումանեանը Եւ Քրիստոնէութիւնը», XX Դարի Հայ Գրականութիւն. Դէմքեր Եւ Խնդիրներ, Երեւան, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» Հրատարակչութիւն, 2002, էջ 30:

¹⁵ Նոյն, էջ 45:

¹⁶ Լեւոն Հախաբերեան, «Վերջին Ներշնչումները», Յովհաննէս Թումանեան, Բանակներ, Երեւան, «Հայաստան», 1969, էջ 87: